ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Գոհար Գավրուշի Սարգսյանի «Իրացվելիության ֆինանսական կառավարման հիմնախնդիրները տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում (Արցախի Հանրապետության սննդի արտադրության կազմակերպությունների նյութերով)» թեմայով Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության վերաբերյալ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ

Իրացվելիությունը և վճարունակությունը շուկայական տնտեսության պայմաններում կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության կարևորագույն հատկանիշներից են: Եթե կազմակերպությունը վճարունակ է և իրացվելի, ապա այն առավելություն ունի այլ կազմակերպությունների նկատմամբ ներդրումներ ներգրավելու, վարկեր ստանալու, մատակարարների և որակյալ կադրերի ընտրության հարցում: Կազմակերպության կարողությունը ժամանակին կատարել վճարումները, ֆինանսավորել իր գործունեությունը և պահպանել իր վճարունակությունը վկայում է իր լավ ֆինանսական վիճակի մասին: Որքան բարձր է կազմակերպության իրացվելիությունը և վճարունակությունը, այնքան այն կախված չէ շուկայական իրավիճակի անսպասելի փոփոխությունից և, հետևաբար, ավելի քիչ է սնանկացման եզրին հայտնվելու ռիսկը: Կազմակերպությունների իրացվելիության ֆինանսական կառավարման բարելավման խնդիրները միշտ եղել են տեսաբանների և գործարարների ուշադրության կենտրոնում: Բիզնեսի կայուն զարգացման նախադրյալներից է ֆինանսական կառավարման հատուկ գործիքակազմ պահանջող կազմակերպության իրացվելիության պատշաճ մակարդակի ապահովումը: Տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների ֆինանսական կառավարման նկատմամբ արդյունավետ մոտեցումների ներդրման և զարգացման հիմնախնդիրների լուծման ուղիների քննարկումներն ու առաջադրումները տեղ են գտել ինչպես օտարերկրյա, այնպես էլ հայազգի հետազոտողների աշխատություններում: Այնուամենայնիվ, իրական հատվածում տնտեսական

գործունեության իրացվելիության ֆինանսական կառավարման կատարելագործման խնդիրները դեռևս չեն ստացել իրենց խորքային լուծումները նրանց հետազոտություններում, ուստի դրանց հիմնովին ուսումնասիրելը և լուսաբանելը հրատապ խնդիր է:

Գ. Սարգսյանի ատենախոսության մեջ դրված նպատակը, դրա լուծմանն ուղղված խնդիրները և այդ շրջանակներում իրականացված հետազոտություններն առնչվում են վերոնշյալ դիտարկումներին, որոնցով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է ներկայացնել Արցախի Հանրապետության տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների իրացվելիության ֆինանսական կառավարման բարելավման ուղիներ, որոնք կնպաստեն ոլորտում ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացմանը: Այդ նպատակի իրականացման համար ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- կատարել սննդարդյունաբերության կազմակերպությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների վերլուծություն, և բացահայտել ոլորտում առկա ակտիվների իրացվելիության մակարդակի ձևավորման առանձնահատկությունները,
- ելնելով տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների գործունեության ֆինանսատնտեսական առանձնահատկություններից՝ առաջարկել իրացվելիության ֆինանսական կառավարման մեթոդաբանական մոտեցումներ,
- ֆինանսական արդյունքների և իրացվելիության փոխկապակցված գնահատումների հիման վրա բացահայտել շահութաբերության և իրացվելիության մակարդակների հակակշռման կառավարելիության աստիճանը,
- մշակել կազմակերպությունների իրացվելիության ցուցանիշների և ֆինանսական ռիսկի փոխկապակցման ֆինանսական կառավարման համակարգ,

- գործոնային գնահատումների միջոցով ներկայացնել ֆինանսական լծակի և ակտիվների իրացվելիության ազդեցության մակարդակների հավասարակշռման կառավարման մեխանիզմ,
- ռեգրեսիոն վերլուծության միջոցով բացահայտել իրացվելիությունն ու գործարար ակտիվությունը բնութագրող ցուցանիշների միջև եղած հնարավոր սերտ կապերը,
- իրացվելիության պաշարի ապահովվածության տեսանկյունից մշակել տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում ֆինանսական ռիսկերի կանխարգելման կառավարման մեխանիզմ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության գիտական նորույթն է հանդիսացել Արցախի Հանրապետության սննդի արդյունաբերության կազմակերպությունների իրացվելիության ֆինանսական կառավարման բարելավման ուղիների մշակումը: Մասնավորապես.

- սննդարդյունաբերության կազմակերպությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների վերլուծության արդյունքում մեկնաբանվել են ոլորտում առկա ակտիվների իրացվելիության մակարդակի ձևավորման առանձնահատկությունները, որի հիման վրա առաջարկվել են իրացվելիության ֆինանսական կառավարման մեթոդաբնական մոտեցումներ,
- տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների ֆինանսական արդյունքների և իրացվելիության փոխկապակցված գնահատումների հիման վրա բացահայտվել է, որ դրամական միջոցների շրջանառության արագացման հիման վրա ապահովելով շահութաբերության և ներդրումային գրավչության աճի միտումներ, միաժամանակ մեծանում է իրացվելիության ռիսկը, ինչն ստեղծում է կարճաժամկետ պարտավորությունների մարմանան կարողության և անվճարունակության ձևավորման էական ռիսկեր,
- մշակվել է տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների իրացվելիության ցուցանիշների և ֆինանսական ռիսկի փոխկապակցման

ֆինանսական կառավարման համակարգ՝ գործոնային գնահատումների միջոցով հնարավորություն ստեղծելով հավասարակշռել ֆինանսական լծակի և ակտիվների իրացվելիության ազդեցության մակարդակները, և կառավարել ֆինանսական պաշարների ապահովվածությունը,

- ռեգրեսիոն վերլուծությամբ բացահայտվել են իրացվելիության և գործարար ակտիվության ցուցանիշների միջև սերտ փոխկապվածություններ, որով հնարավորություն է ստեղծվում կիրառել ֆինանսական ռիսկերի կառավարման արդյունավետ գործիքներ, և իրականացնել իրացվելիության պաշարի ապահովվածության հիմնավոր գնահատումներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունների բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, հետազոտության գիտական նորույթները, գործնական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության արդյունքների փորձարկումն ու հրապարակումները:

Ատենախոսության առաջին՝ ***«Իրացվելիության ֆինանսական կառավարման տեսական հիմքերը»*** գլխում ուսումնասիրվել և ներկայացվել են «իրացվելիություն» և «վճարունակություն» եզրույթների վերաբերյալ տարբեր մոտեցումները, բացահայտվել է իրացվելիության տնտեսական բովանդակությունը, ներկայացվել են կազմակերպության վճարունակության և իրացվելիության գնահատման հիմնական բացարձակ և հարաբերական ցուցանիշները, ակտիվների և պասիվների դասակարգման, ինչպես նաև հաշվեկշռի իրացվելիությունը որոշելու համար կիրառվող տարբեր մոտեցումները: Այնուհետև անդրադարձ է կատարվել կազմակերպության իրացվելիության և վճարունակության կառավարման մեթոդներին:

Ատենախոսության երկրորդ՝ ***«Իրացվելիության ֆինանսական կառավարման գնահատականը տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում /ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների նյութերով/»*** գլխում կատարվել է ԱՀ սննդի արտադրության ոլորտի կազմակերպությունների վիճակի ընդհանուր գնահատում: Հեղինակի կողմից իրականացվել է ԱՀ արդյունաբերության /մասնավորապես՝ սննդի արտադրության/ ոլորտի առևտրային կազմակերպությունների գործունեությունը բնութագրող որոշ հիմնական ցուցանիշների դինամիկայի վերլուծություն, ուսումնասիրվել և ներկայացվել է ԱՀ արդյունաբերական ոլորտի, իսկ այնուհետև՝ ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների ֆինանսական արդյունքները բնութագրող ցուցանիշների դինամիկան, իրականացվել է Արցախում գործող կազմակերպությունների ակտիվների և պասիվների դինամիկայի ուսումնասիրություն, գնահատվել է ԱՀ սննդի արտադրության որոշ կազմակերպությունների ընթացիկ և հեռանկարային իրացվելիությունը՝ բացարձակ մեծությամբ, որից հետո, ֆինանսական գործակիցների օգնությամբ իրականացվել է իրացվելիության մանրամասն վերլուծություն, ինչպես նաև ԱՀ սննդի արդյունաբերության կազմակերպությունների համար ընթացիկ իրացվելիության նորմատիվային արժեքի հաշվարկ:

Ատենախոսության երրորդ՝ ***«Կազմակերպության իրացվելիության կառավարման արդի հիմնախնդիրները և բարելավման հեռանկարները /ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների նյութերով/»*** գլխում ուսումնասիրվել է կազմակերպության իրացվելիության գնահատման ցուցանիշների գործող համակարգը և տրվել ֆինանսական կառավարման գնահատականը, ներկայացվել են շահութաբերության ցուցանիշները և իրականացվել է ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների շահութաբերության ամփոփ ցուցանիշների հաշվարկը: Ֆինանսական պարբերաշրջանի, շահութաբերության և իրացվելիության ցուցանիշների կապը բացահայտելու նպատակով՝ ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա կազմվել են ռեգրեսիոն մոդելներ:

Ատենախոսության ***«Եզրակացություններ»*** բաժնում ընդհանրացվել և ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները:

Աշխատանքում հեղինակի կողմից օգտագործվել են հայրենական և արտասահմանյան գիտական աղբյուրներ, ուսումնասիրվել և օգտագործվել են հետազոտության ոլորտին առնչվող վիճակագրական տվյալներ, առանձին կազմակերպությունների հաշվետվությունների տվյալներ, համացանցային տեղեկատվական աղբյուրներ:

Հատկապես արժեքավոր է ռեգրեսիոն վերլուծությամբ սննդի արտադրության կազմակերպությունների իրացվելիության, շահութաբերության և ֆինանսական պարբերաշրջանի ցուցանիշների փոխկապվածությունը բնութագրող տնտեսամաթեմատիկական մոդելների կառուցումը:

Հետազոտության արդյունքում մշակված առաջարկություններն ունեն գործնական կիրառման հնարավորություններ Արցախի Հանրապետության սննդի արտադրության կազմակերպություններում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այնուհանդերձ, աշխատանքը զերծ չի նաև որոշ թերություններից և բացթողումներից.

1. Ատենախոսության 1.1 «Իրացվելության տնտեսական բովանդակությունը» ենթագլխում հեղինակի կողմից ներկայացված են «իրացվելիություն» և «վճարունակություն» եզրույթների սահմանումների վերաբերյալ տարբեր մոտեցումներ: Տեղին կլիներ տալ նաև նշված եզրույթների հեղինակային սահմանումները:
2. Ատենախոսության մեջ հեղինակի կողմից հաճախակի օգտագործվում են «շրջանառու ակտիվներ», «շրջանառու կապիտալ» եզրույթները: Մեր կարծիքով ճիշտ կլիներ «շրջանառու» բառը փոխարինել «ընթացիկ» բառով:
3. Ատենախոսության 1.2 «Կազմակերպության վճարունակության և իրացվելիության գնահատման հիմնական ցուցանիշները» ենթագլխում ատենախոսը հղում է կատարում և ներկայացնում Օ. Եֆիմովայի կողմից առաջարկված սեփական ընթացիկ կապիտալի վերլուծության փուլերը: Նպատակահարմար կլիներ այդ փուլերով հետագայում իրականացնել պրակտիկ հաշվարկներ:

4. Ատենախոսության 2.3 «Իրացվելիության և վճարունակության գնահատումը «Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության» տվյալների հիման վրա» ենթագլխում հեղինակի կողմից ներկայացվում է «իրացվելիության ինդեքս» ցուցանիշը, որի կարևորությունը լրացուցիչ պարզաբանում է պահանջում:
5. Աշխատանքում առկա են տեխնիկական բնույթի որոշ թերություններ:

Սակայն նշված դիտողությունները էապես չեն ազդում ատենախոսության գիտական մակարդակի և գործնական նշանակության ընդհանուր գնահատականի վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով, կարելի է հավաստել, որ ատենախոս Գ.Գ. Սարգսյանի կողմից կատարվել է արդիական, ծավալուն, տեսամեթոդական և կիրառական բնույթի հետազոտություն: Ընդհանուր առմամբ այն կարելի է որակել որպես պատշաճ մակարդակով կատարված ինքնուրույն ավարտուն գիտական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են ԱՀ սննդի արտադրության ոլորտի իրացվելիության ֆինանսական կառավարման տեսական և գործնական կարևոր խնդիրներ և ձևավորվել են գիտական նորովի արդյունքներ:

Սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան, համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Հեղինակի կողմից հրատարակված գիտական աշխատությունները արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, որ Գ. Գ. Սարգսյանի «Իրացվելիության ֆինանսական կառավարման հիմնախնդիրները տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում (Արցախի Հանրապետության սննդի արտադրության կազմակերպությունների նյութերով)» թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը բավարարում է Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ թեկնածուական

ատենախոսություններին «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի ևՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրահեղինակը՝ Գոհար Գավրուշի Սարգսյանն, արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության թեկնածու,
«Գրանդ Մուլինո» ՍՊԸ ֆինանսական տնօրեն՝ Ս. Ռ. Միրզոյան

Տնտեսագիտության թեկնածու
Ս. Ռ. Միրզոյանի ստորագրությունը
հավաստում եմ
«Գրանդ Մուլինո» ՍՊԸ տնօրեն՝ Ա. Ս. Ավետիսյան

15.04.2022թ.